

Հավելված
ՀՀ կառավարության 2021 թվականի
սեպտեմբերի 30-ի N 1591 - Ա որոշման

ԱՄՓՈՓ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՅՈՒՄԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՏՐԱՆՇ 2-Ի ԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՈՏ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԱՆՔԸ ՇՐՋԱՆՑՈՂ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀԻ ԿՄ 29+600 - ԿՄ 37+544.68 ՀԱՏՎԱԾԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆ ՆԱԽԱԳԾԻ ՓՈՓՈԽՎԱԾ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՏՈՒԿ ՀԱՄԱԼԻՐ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

18 օգոստոսի 2021 թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի Տրանշ 2-ի Ագարակ համայնքի մոտ հնագիտական տեղանքը շրջանցող ավտոճանապարհի կմ 29+600 - կմ 37+544.68 հատվածի վերակառուցման մանրամասն նախագծի փոփոխված նախագծային փաստաթղթերի հատուկ համալիր փորձաքննության իրականացման նպատակով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2021 թվականի հունիսի 22-ի թիվ 988-2021-Ա հրամանով ձևավորվել է միջգերատեսչական ժամանակավոր հանձնաժողով:

2. Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի Տրանշ 2-ի Ագարակ համայնքի մոտ հնագիտական տեղանքը շրջանցող ավտոճանապարհի կմ 29+600 - կմ 37+544.68 հատվածի վերակառուցման սկզբնական մանրամասն նախագծի վերաբերյալ հատուկ համալիր փորձաքննության ամփոփ եզրակացությունը Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մայիսի 27-ի N 869-Ա որոշմամբ ստացել է հավանություն:

3. Փոփոխված նախագծային փաստաթղթերում սկզբնական մանրամասն նախագծի համեմատ կատարվել է փոփոխություն, որը վերաբերում է միայն նախկինում նախագծված ցեմենտբետոնե պատվածքն ասֆալտբետոնե պատվածքով

փոխարինելուն, իսկ սկզբնական մանրամասն նախագծի մնացած տարրերը մնացել են անփոփոխ:

4. Փոփոխված նախագծային փաստաթղթերի փաթեթը 2021 թվականի հունիսի 30-ին թիվ ՔՂ/34/16430-2021 գրությամբ տրամադրվել է հանձնաժողովի անդամներին:

5. Ընդհանուր առմամբ տեղի է ունեցել հանձնաժողովի երկու նիստ՝ 13.07.2021 թ.-ին և 18.08.2021 թ.-ին:

6. Հատուկ համալիր փորձաքննության ենթակա փոփոխված նախագծա-հաշվարկային փաստաթղթերի վերաբերյալ ստացվել են հանձնաժողովի անդամների դիտողություններն ու առաջարկությունները, որոնց ամփոփման արդյունքներով կազմվել է հանձնաժողովի սույն եզրակացությունը:

7. Սկզբնական մանրամասն նախագծի, ինչպես նաև փոփոխված նախագծային փաստաթղթերի կազմման համար հիմք են ընդունվել հետևյալ շինարարական նորմերն ու ստանդարտները՝

- 1) ՀՀՇՆ IV-11.05.02-99 Ավտոմոբիլային ճանապարհներ.
- 2) AASHTO, Պետական մայրուղիների և տրանսպորտային պաշտոնյաների ամերիկյան ասոցիացիա.
- 3) RAS Richtlinie for die Anlage von Strassen (Գերմանիա).
- 4) RAA Richtlinie for die Anlage von Autobahnen (Գերմանիա):

2. ՓՈՓՈԽՎԱԾ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

8. Սկզբնական մանրամասն նախագծի, ինչպես նաև փոփոխված նախագծային փաստաթղթերի մշակման համար հիմք են հանդիսացել հետևյալ իրավական ակտերն ու փաստաթղթերը՝

- 1) Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև 2011 թվականի մայիսի 30-ին կնքված թիվ 2729-ARM վարկային համաձայնագիրը.
- 2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 26-ի N 508-Ա որոշումը.

3) 2019 թվականի դեկտեմբերի 25-ին կայացած՝ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի, քաղաքային կայուն զարգացման ներդրումային և հյուսիսային միջանցքի արդիականացման ծրագրերի կառավարման խորհրդի նիստի թիվ ՓՎ/02-2020 արձանագրությունը.

4) 2020 թվականի դեկտեմբերի 24-ին կայացած՝ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի, Մ-6, Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական ավտոմոբիլային ճանապարհի (կմ 38+450 - կմ 90+191 հատված) վերականգնման և բարելավման, քաղաքային կայուն զարգացման ներդրումային և հյուսիսային միջանցքի արդիականացման ծրագրերի կառավարման խորհրդի նիստի թիվ ՓՎ/204-2020 արձանագրությունը.

5) 2021 թվականի փետրվարի 26-ին «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի և «EGIS International և Kocks Consult GMBH» Հ/Ձ միջև կնքված թիվ ADB/T2/CS/SSS/01-T1 պայմանագիրը:

3. ՓՈՓՈԽՎԱԾ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

9. Սկզբնական մանրամասն նախագծի մշակման փուլում ինժեներա-երկրաբանական հետազոտությունները կատարվել են ակնադիտարկման և հորատանցքերի հորատման եղանակով:

10. Սկզբնական մանրամասն նախագծի մշակման համար իրականացված ուսումնասիրությունների արդյունքում բացահայտվել են ճանապարհային հատվածի գոտու գրունտային շերտավորումները, հիդրոերկրաբանական պայմանները, իսկ լաբորատոր փորձարկումներով՝ գրունտների ֆիզիկամեխանիկական ցուցանիշները:

11. Ճանապարհահատվածի նախագծման համար ընդունվել է I տեխնիկական կարգը, 100 կմ/ժ հաշվարկային արագությամբ:

12. Երկայնական կտրվածքը նախագծված է ՀՀՇՆ IV-11.05.02-99 նորմատիվի պահանջներին համապատասխան: Երկայնական կտրվածքի նիշերը կապված են պետական միկրոտեռանկյունավորման կետերի հետ:

13. Ճանապարհահատվածի լայնական կտրվածքի հիմնական պարամետրերն են՝

- 1) երթևեկելի գոտիների քանակը՝ 2.
- 2) երթևեկելի շերտերի քանակը՝ 4.
- 3) երթևեկելի մեկ շերտի լայնությունը՝ 3.6 մ.
- 4) կողնակի լայնությունը՝ 3.75 մ.
- 5) բաժանիչ գոտու լայնությունը՝ 4.8 մ.
- 6) հողային պաստառի լայնությունը՝ 26.7 մ.
- 7) ճանապարհի պատվածքը (փոփոխված)՝ ասֆալտբետոնե պատվածք:

14. Ճանապարհի փոփոխված պատվածքի (ընդհանուր հաստությունը՝ 770 մմ)

կառուցվածքն է՝

- 1) ասֆալտի մակերեսային (Asphalt surface course) շերտ (հաստությունը՝ 50 մմ).
- 2) ասֆալտի կապակցող (Asphalt binder course) շերտ (հաստությունը՝ 70 մմ).
- 3) բիտումով մշակված հիմքի (Bituminous treated base course) շերտ (հաստությունը՝ 80 մմ).
- 4) հիմքի (Base course) շերտ (հաստությունը՝ 270 մմ).
- 5) ենթահիմքի (Subbase course) շերտ (հաստությունը՝ 300 մմ):

15. Տրանսպորտային հանգույցներում, անցումային արագացման-դանդաղեցման գոտիներում, T-աձև հատումներում ճանապարհային պատվածքը նույնպես ասֆալտաբետոն է:

16. Անցումային արագացման գոտու լայնությունն ընդունված է ճանապարհի հիմնական շերտին հավասար, ինչպես նշվում է նորմերում: Անցումային-արագացման գոտիները շարժման հիմնական շերտից առանձնացված են բաժանիչ շերտով:

17. Նախագծված է տրանսպորտային հանգույց Ագարակ-Ոսկեվազ հատման կետում (կմ 31+967): Ուղեանցը նախագծված է 2x18մ սխեմայով և ունի 8մ գաբարիտ: Ուղեանցի ձախ կողմի թևը ապահովում է անվտանգ կապ բնակավայրերի և Երևան-Գյումրի մայրուղու միջև:

18. Անվտանգությունը բարելավելու նպատակով նախատեսված է ճանապարհային նշանների և արգելափակոցների տեղադրում, ճանապարհային նշագծում:

Նախատեսված է համապատասխան արհեստական կառույցների (ուղեանց, գյուղ-տեխնիկայի անցումներ, խողովակներ, ստորգետնյա անասնանցումներ) կառուցումը:

19. Նախատեսված է շինարարությանը խոչընդոտ հանդիսացող հաղորդակցուղիների (գազատարներ, էլեկտրամատակարարման, ոռոգման և ջրամատակարարման համակարգեր) տեղափոխում և նորերի կառուցում:

4. ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

20. Հանձնաժողովը, քննության առնելով Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի Տրանշ 2-ի Ագարակ համայնքի մոտ հնագիտական տեղանքը շրջանցող ավտոճանապարհի կմ 29+600 - կմ 37+544.68 հատվածի վերակառուցման փոփոխված նախագծային փաստաթղթերը, կազմակերպել է աշխատանքային քննարկումներ, ինչպես նաև հանձնաժողովի երկու նիստ, որոնց արդյունքում փաստվեց, որ՝

1) «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի ներկայացուցչի կողմից ներկայացվել են տեխնիկական բնույթի հարցադրումներ: Հարցադրումներն ուղղվել են նախագծող կազմակերպությանը, որը տրամադրել է սպառիչ պարզաբանումներ.

2) Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի ներկայացուցչի կողմից ներկայացվել է հարցադրում, որը կապված էր լրացուցիչ պետական փորձաքննության անցկացման անհրաժեշտության հետ: Նշված խնդիրը քննարկվել է հանձնաժողովի նիստում, ինչպես նաև աշխատանքային կարգով՝ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեում.

3) «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչը տեղեկացրեց, որ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայումս իրականացվում են ներկայացված նախագծային փաստաթղթերի ՇՄԱԳ-ի հաշվետվության փորձաքննական գործընթացներ:

21. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից ներկայացվել են որոշ դիտարկումներ: Մասնավորապես՝

1) նշվել է, որ Տրանշ 2-ի Ագարակ համայնքի սահմաններում՝ անցնող ավտոճանապարհի կմ 29+600 - կմ 37+544.68 հատվածի նախահաշվային փաստաթղթերի վերաբերյալ փորձաքննության եզրակացության մեջ նշված մետաղական D=720 մմ և D=1020 մմ տրամագծերով խողովակների ուղեգծերի վերաբերյալ նյութերը նախարարություն չի ներկայացվել և դրանց տեղադրման համար նախատեսվող տարածքներում հնագիտական հուշարձանների առկայության վերաբերյալ ուսումնասիրություններ չեն կատարվել:

2) նշվել է, որ արգելոցի սահմաններում ընկած հատվածում հնագիտական հետախուզական ստուգողական պեղումների իրականացումը խիստ անհրաժեշտ է:

22. Նշված դիտարկումներին տրամադրվել են հետևյալ պարզաբանումները՝

1) D=720 մմ և D=1020 մմ տրամագծերով խողովակները հանդիսանում են պատյան խողովակներ ճանապարհի հատումների համար և գտնվում են կառուցվող ճանապարհի լիցքի տակ՝ նշված ճանապարհահատվածի համար ուսումնասիրված և հաստատված միջացնքի սահմաններում:

2) կապալի պայմանագրում (ծավալների ամփոփագիր N 1, աշխատանքի տեսակ 101.3-2), ինչպես նաև տեխնիկական մասնագրերում (բաժիններ 101.6, 101.9, 101.10, 101.16.12) հստակ նշված է, որ շինարական աշխատանքներն իրականացնելու ժամանակ կապալառու կազմակերպությունը պետք է ապահովի համապատասխան միջոցառումների (անհրաժեշտության դեպքում նաև ստուգողական պեղումներ) իրականացումը, որոնք կապահովեն հնագիտական, պատմական և մշակութային վայրերի պաշտպանությունը: Ավելին, կապալի պայմանագրով նախատեսված է հնագիտության մասնագետի պարտադիր ընդգրկումը կապալառուի հիմնական աշխատակազմում:

23. Կոմունալ ցանցերի (էլեկտրական ցանցեր, ջրամատակարարման համակարգեր և այլն) ներկայացուցիչները լրացուցիչ դիտարկել են կոմունալ ցանցերի տեղափոխման հետ կապված նախագծային լուծումները:

24. Հաշվի առնելով հանձնաժողովի կողմից իրականացված ուսումնասիրության արդյունքները, ինչպես նաև հիմք ընդունելով՝

1) նախագծված ճանապարհային մասի և հաղորդակցուղիների տեղափոխման վերաբերյալ «Հայաստանի Հանրապետության նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ի 2018 թվականի նոյեմբերի 11-ի թիվ 17/ՓՊ-323Փ դրական եզրակացությունը.

2) սկզբնական մանրամասն նախագծի վերաբերյալ հատուկ համալիր փորձաքննության ամփոփ եզրակացությանը հավանություն տալու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մայիսի 27-ի N 869-Ա որոշումը.

3) Տրանշ 2-ի Ագարակ համայնքի մոտ հնագիտական տեղանքը շրջանցող ավտոճանապարհի կմ 29+600 - կմ 37+544.68 հատվածի նախահաշվային փաստաթղթերի վերաբերյալ «Հայաստանի Հանրապետության նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ի 2021 թվականի օգոստոսի 4-ի թիվ 17/ՓՊ-223 դրական եզրակացությունը՝

հանձնաժողովը երաշխավորում է, որ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի Տրանշ 2-ի Ագարակ համայնքի մոտ հնագիտական տեղանքը շրջանցող ավտոճանապարհի կմ 29+600 - կմ 37+544.68 հատվածի վերակառուցման փոփոխված նախագծային փաստաթղթերը նախագծողի տեխնիկական առաջադրանքի շրջանակներում համապատասխանում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ